



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌՈՒՄ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

ԴՊՐԵՎԱՆՔԻ ԿՐԹԱԿԱՆ 60-ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ
(1989—1990)

Երկուշաբթի, 16 Հոկտեմբեր, 1989-ի պայծառ առաւօտուն Ընդհանրապետութեամբ, Ընդ յոյսերով եւ Ընդ ձգտումներով լեցուն մթնոլորտի մը մէջ տեղի ունեցաւ Դպրեվանքի 60-րդ Կրթական Տարեշրջանի Բացման հանդիսութիւնը: Ա. Աթոռիս Գահակալ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ, ժամը 9-ին Պիքֆայայի ԲՐԱԲԻՈՆ ՏՈՒՄԱՆԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀԻՆ մէջ կատարուեցաւ բացման հանդիսութիւնը, միաբան հայրերու, ուսուցիչներու եւ ուսանողութեան ներկայութեան:

Վեհափառ Հայրապետը իր շքախմբով սրահ առաջնորդուեցաւ «Ամէն հայի սրտից բխած» մաղթերգով: Հանդիսութիւնը սկսաւ «Սիրտ ի սիրտ» Դպրեվանքեան քայլերգի եռաձայն երգեցողութեամբ, յետոյ հատուած մը Աւետարանէն, կարդացուեցաւ Գրիգոր Նարեկացի «Մատենան Ողբերգութեան»-էն հատուած մը, ուր կը մեկնաբանուի եւ կը բացայայտուի խաչով զոհողութեան այն մեծ խորհուրդը, որով մեր Տէրը յաղթեց չարին ու մահուան: Դպրեվանքի երգչախումբը «Որք զարդարեցին» շարականով Թարգմանիչ վարդապետները մեր հանդիսութեան ներկայութեան բերաւ եւ Դուրեան Սրբազանի «Խաչը» բանաստեղծութեան երգեցողութեամբ վերստին պայծառացուց ներկաներուն մէջ յանձնառութեան եւ զոհողութեան սերտ գաղափարները:

Դպրեվանքի Տեսուչ՝ Արշաիր ծ. Վրդ. Գաբունեան իր բացման խօսքին մէջ վերլուծելով Դպրեվանքի 60-ամեայ կեանքի հոլովոյթը, մասնաւորաբար անոր հաստատման առաջին տարիներու տագնապին եւ գոյատեւութեան եւ յոյսին մէջէն մեզի՝ 60-ամեակի սերունդիս հասնող պատգամներ վեր բերաւ: Տեսուչ Հայր Սուրբը Դպրեվանքի հիմնադիրներէն մտածումներ մէջբերեց եւ շեշտեց **ծառայասիրութեան, աշխատեցողութեան, ապրաքարելու եւ տոկուն նկարագիր** ունենալու երեք գաղափարները:

Արտասանուեցաւ Դանիէլ Վարուժանի «Հայր Օրհնէ» բանաստեղծութիւնը:

Հանդիսութեան ասարտին, Վեհափառը իր Հայրական պատգամն ու օրհնութիւնը տուաւ աշակերտներուն հետեւեալ խօսքով.

ՎԵՀԻ ԽՕՍՔԸ ՈՒՂՂԵԱԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Սիրելի՛ Տեսուչ Հայր Սուրբ, Ոստոցիչներ, եւ շատ սիրելի ուսանողներ Դպրեւանքի,

Կ'ուզեմ առաջին հերթին, բոլորս միասին, անկեղծ խոստովանանքի պահ մը ունենանք եւ Աստուծոյ հայելիին մէջ նայինք. ամէն մէկս այս Դպրեւանքի բացման առիթով մենք զմեզ թարմացնենք հայու կերպարին մէջ եւ մարդու տիպարին մէջ, զոր Աստուած կ'ուզէ որ բոլորս ըլլանք:

Երբ այսօր կ'ունկնորէի ձեր Տեսուչին քարոզը, երբ եօթը տարբեր սահմանումներով եկեղեցին ներկայացուց, շատ գեղեցիկ կերպով պատկերացուց թէ ի՞նչ է եկեղեցին ըստ էութեան, ըստ Քրիստոսի: Այդպէս է եկեղեցին ըստ Աւետարանի, այդպէս է եկեղեցին ըստ մեր հայրերուն:

Ես կ'ուզեմ բոլորս ալ, իրաքանչիւրը ինք իրեն հարցում մը տալ.— արդեօք ա՛յդ է ամբողջականօրէն եւ իսկապէս մեր եկեղեցին **այսօր** մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Եկեղեցին պէտք է ապրուի ժողովուրդի կեանքին մէջ: Ինչպէս ինքը՝ Յիսուս, Աստուածորդին, մարդիկ ընտրեց, որպէսզի իր գաղափարները տարածեն իրենց կեանքի ձեւին եւ իրենց խօսքերուն ու արարքներուն մէջէն, այդպէս ալ եկեղեցին այսօր, ըլլալու համար այն ինչ որ է ըստ Քրիստոսի, ըստ Աստուծոյ, եւ ըստ Աւետարանին ու ըստ մեր հայրերուն, մարդոց պէտք ունի, որոնք եկեղեցիին ոգին իրենց մէջ ապրին. ամէն բանէ վեր, եւ ճշմարտօրէն թարգմանեն եկեղեցին: Գրականութիւնը՝ գրագետի՝ պէտք ունի, նկարչութիւնը՝ նկարիչի պէտք ունի, երաժշտութիւնը՝ երաժիշտի պէտք ունի, հայրենիքը՝ հերոսի պէտք ունի, քաջ զինուորի պէտք ունի, այդպէս ալ եկեղեցին եկեղեցականի պէտք ունի, եկեղեցահոգի մարդու:

Դպրեւանքը, սիրելի՛ ուսանողներ, Դպրեւանքը այդ արուեստի դըպրոցն է: Հայ մարդու, իրական եկեղեցականի կերտումի օճախն է, վառարանն է, ինչպէս դուք կ'երգէք՝ **«Տաճար հրաշագործ, վսեմ ձուլարան, ուր կապարն ոսկի, նիւթն յոգի դառնան»**: Կը մտնէք այսօր, ձեզմէ շատերը վերամուտ իբրեւ, իսկ ուրիշներ, փոքրիկները, որոնք կը տեսնեն աչքերու առջեւ, իբրեւ նոր աշակերտներ, զգացէք տարբերութիւնը Դպրեւանքին եւ ուրիշ դպրոցներու: Դպրեւանքի մէջ պարզ **աշակերտ** չէք այլեւս, **ուսանո՛ղ** էք:

Ի՞նչ գեղեցիկ էր անցեալ օր, երբ Մեր հոգեւոր Եղբօր՝ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը կարդացի մամուլին մէջ. տեսայ թէ ինչպէս կրօնական զարթօնքը, եկեղեցիին կարօտը, եկեղեցիին կարիքը մեր ժողովուրդի կեանքին մէջ այնքան կը զգացուի, որ նոր եկեղեցիներ բացուած են եւ նոր հոգեւորականներ կը ձեռնադրուին, ու մէկ տարուան մէջ, Դպրեւանքի՝ Հոգեւոր Ծեսարանի ուսանողութեան թիւը 35-էն 70-ի բարձրացած է: Այո, երիտասարդներու մէջ, պատանիներուն մէջ կայ զգայարանք մը՝ տեսնելու համար թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ աշխարհի մէջ:

Սիրելի ուսանողներ, մի տարուիք միայն տեսնուածներէն. տեսնուածներուն մէջէն չտեսնուողը տեսէք. այն ինչ որ կը տեսնէք իբրեւ երեւոյթներ, ատոնցմէ մի տարուիք. այդ չէ աշխարհը: Այս գեղեցիկ կեանքը ար-

ժեռորելու համար արտաքին երեւոյթներէն մի տարուիք. առաքելութիւն ունեցէք: Այս ժողովուրդին դատը, այս ժողովուրդին ըլլալիքը ձեր հոգիին թող խօսի եւ եկեղեցիին ճամբով ձեր բաժինը բերէք. ուրիշներ՝ ուրիշ ճամբով կը բերեն. զինուորը, հերոսը իր արեամբ կը բերէ, իր զէնքով կը բերէ, դուք ալ այնպէս մը լեցունցէք, որ ըլլաք այնպիսի մարդիկ, որ կարենաք Աստուծոյ ստեղծած եկեղեցիին մեր ժողովուրդի կեանքին մէջ թարգմանել: Առաքիւնութեան, գիտակցութեան, բարձր պատասխանատւութեան դասերը թող ըլլան ձեր ամենէն շատ սիրած դասերը:

60-րդ տարեշրջանի այս բացումին առիթով կը յայտնեմ իմ հոգեկան խնդրութիւնը, եւ առ Աստուած գոհութիւն կ'ընծայեմ, որ ահաւասիկ կարողացանք Դպրեվանքի 60-րդ տարեշրջանը բանալ: Ձեզմէ ամէն մէկը թող երթայ ու կարդայ վաթսուն տարիներուն մասին: Վաթսուն տարի այս հողին վրայ քանի՜ Կաթողիկոսներ եկան, քանի՜ հոգեւորականներ եկան, ոմանք գացին, ոմանք դեռ կան:

Կ'աղօթեմ որ Աստուած փորձանքը, փորձութիւնը, մակերեսայնապաշտութիւնը, սնամէջ կեանքի ըմբռնումները փարատէ ձեր բոլորին մէջ, Թարգմանիչ վարդապետներու հոգիին հետ հաղորդ դառնաք եւ ոչ թէ՛ սոսկ խօսքով կամ ճառով. այս «գիրը կենդանի», զոր անոնք ստեղծեցին, այդ գիրը չկտորի ձեր ձեռքերուն մէջ, հայերէն բառ սխալ չգրէք: Թարգմանիչները պատուել եւ իրենց գիրը կտորել՝ դաւաճանութիւն է: Թող հայ լեզուն, գեղեցիկ լեզուն ձեր շրթունքներուն վրայ մնայ մաքուր: Լեցունցէք այնպիսի կամքով որ ձեզի տրուածը ձեր ուսուցիչներէն եւ ձեր Տեսչութենէն, իրացնելու փափաքովը առնէք: Դարձէք իսկական Դպրեվանքիներ եւ Աստուծոյ հոգին, եկեղեցոյ էութիւնը ձեր մէջ ապրող Թարգմանիչներուն եռանդը ձեր մէջ վերստին եռացող նոր սերունդ: Թող այս տարին լաւագոյն տարիներէն մէկը ըլլայ մեր Դպրեվանքի, 60-ամեակի սերունդ թող կոչովի այս սերունդը:

Կը շնորհատրեմ Տեսչութիւնը, ոյժ կը մաղթեմ բոլոր անդամներուն՝ Տեսուչ Հայր Սուրբին, իր օգնական Հայր Սուրբերուն, Ուսուցչական Կազմի անդամներուն, բոլոր սպասարկողներուն, բոլոր բարեկամներուն եւ բոլոր բարերարներուն, որոնք այս տունը շէն կը պահեն: Թող Աստուած իրենց վարձահատոյց ըլլայ, իրենց ամբողջական, անձնուէր ընծայումին եւ զոհողութեան համար:

Դպրեվանքի 60-րդ կրթական տարեշրջանի բացման հանդիսութիւնը վերջ գտաւ յոտնկայս «Կիլիկիա»-ի երգեցողութեամբ եւ Վեհափառ Հօր «Պահպանիչ»-ով:

ԴՊՐԵՎԱՆԵՑԻ

Բ. ՀԱՅ ԳԻՐՔԻ ԺԲ. ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Որքա՜ն խրախուսիչ երեւոյթ էր տեսնել հսկայ բազմութիւն մը Անթիլիասի Մայրավանքին մէջ, որ որոշ կարօտով մը կարծէք եկած էր իր տարեկան հանդիպումը ունենալու Հայ Գիրքին հետ, որուն 12-րդ ցուցահանդէսն էր այս տարի, կազմակերպուած Կաթողիկոսարանիս Գրատան Տեսչութեան կողմէ, մասնակցութեամբ **Համազգայինի, Կիրակնօրեայ դպրոցներու, Տօնիկեան, Երրակ, Սեւան, Գառնի, Հայ Տիպ Քոմփիլրաֆ-Թէքնօփրէս, Թէքէեան** եւ անհատական հրատարակչատուներուն: